Փող չկա, փոխանցումն էլ դեռ «տեղ չի հասել»

(տխուր փաստեր և առավել տխուր եզրահանգումներ)

Զոհված և վիրավոր ազատամարտիկներ՝ արդեն լեգենդ դարձող կամ մոռացված անուններ ու հաշմանդամ երիտասարդներ: Նրանք բնկան կամ խեղանդամ դարձան, որպեսզի հակառակորդի հարձակումների ժամանակ ռազմաճակատներում զիրքային փոփոխություններ չլինեն, որպեսզի մեր բնակավայրերն ապրող ռազմական հետևակները ոչնչացվեն, որպեսզի այս վերջին Հայաստանն էլ կամաց-կամաց չտրրանա...

Նրանք փորձեցին անել այն, ինչը տարբեր պատճառներով չհաջողվեց նախորդ սերունդներին, նրանք հանդուգն հենց սարերում ապրեցին ու արեցին հնարավորն ու անհնարինը: Այժմ հողում հանգչող կամ մահճակալներին գամված այդ մարդիկ հայրենիքի ու սերունդների համար արեցին այն, ինչ կարող էին, իսկ ի՞նչ ենք անում մենք նրանց համար:

Պաշտպանության փոխնախարար, գնդապետ Ասատուր Պետրոսյանի պատմածը տխուր էր ու կան տակալն...

Պաշտպանության նախարարությունն աշխատաների է ընդունել մարդկանց (28 հոգի, ենթասպայից մինչև մայոր), որոնց գործը զոհվածներին հուղարկավորելն է, որովհետև ոչ մի կազմակերպություն չի ցանկանում զբաղվել դրանով: Նախարարությունում ստեղծվել է դագաղագործական արհեստանոց, որովհետև հանրապետության կոմերիչ ու փայտամշակման ֆաբրիկաները հրաժարվում են գեթ փորր-ինչ զեղչ գներով դագաղներ պատրաստել:

1993 թվականի սկզբին նախարարությունը ստիպված էր «Եռաբլուր» հուշահամալիր-պանթեոնը վերցնել իր տնօրինության ներքո և այն բարեկարգելու ու զոհվածների գերեզմանները կառուցապատելու նպատակով պայմանագրեր կնքել «Սիփան» բազմապրոֆիլային և «Հայմարմարգրանիտ» կազմակերպության հետ, որովհետև Երևանի քաղխորհրդի գործկոմը, որի տնօրինության տակ էր «Եռաբլուր» մինչև 1993-ի սկիզբը, «Հայարդշին» գրնատի հետ լրիվ փոշիացրել էին հուշահամալիր-պանթեոնի բարեկարգման համար տրամադրված միջոցները, 2, 5 տարվա ընթացքում բավական անորակ կեղծով կառուցապատելով ընդամենը 21 գերեզման: Հետո պարզվել էր, որ հատկացված միջոցները «գործի մեջ են դրվել»:

Տեղական իշխանությունների ստղակի խայտառակ աշխատանքի պատճառով վիճակն ավելի ահավոր է հանրապետության շրջաններում: Ազատամարտիկի զոհվելու վերաբերյալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի չեղարկումը տեղում է առնվազն կես տարի, որից հետո էլ տեղական իշխանությունները հանձնարարվում են զոհվածների ընտանիքներին հատկացվելիք 100000-ական ռուբլին տալուց՝ պատճառաբանելով ազատ միջոցների բացակայությունը, և առաջարկում են սպասել, մինչև ֆինանսների նախարարությունը փոխանցումը կատարի: Ինչ-որ պահի փոխանցումը կատարվում է, որից հետո, օրեցօր արժեզրկվող դրամի վճարումը հաճախ ամիսներով կրկին հետաձգվում է, «բանկային համակարգի անկատարության պատճառով փոխանցումը դեռ տեղ չի հասել» պատճառաբանությամբ: Զոհվածների հարազատների դիմում-բողոքներից հետո պաշտպանության նախարարությունը սկսում է զբաղվել այդ հարցով, և պարզվում է, որ փոխանցումները տեղ են հասել, բայց դրվել են շրջանառության մեջ, որ որոշ պաշտոնատար անձինք ուղղակի «գործ են անում»: Այդ ժամանակ փոխանցումը «տեղ է հասնում», և գումարն անմիջապես վճարվում է:

Տեղերում գործադիր կոմիտեների ղեկավարները միջոցներ չեն գտնում նաև զոհվածների գերեզմանները կառուցապատելու համար: «Երեք և կես տարեկան երեխան մեծանում է այն գիտակցությամբ, որ հոր գերեզմանին քար չկա», – ասում է գնդապետ Ասատուր Պետրոսյանը, և բերում հետևյալ տխուր վիճակագրությունը՝ Արարատի շրջանում զոհված 65 ազատամարտիկներից միայն 7-ի գերեզմաններն են կառուցապատված, Արտաշատում 49-ից՝ 6-ի, Գորիսում 45-ից՝ 18-ի, Էջմիածնում 52-ից՝ 16-ի, (գործկոմը կառուցապատել է ընդամենը երեք գերեզման), Իջևանում 27-ից՝ 6-ի, և այսպես շարունակ...

Եթե վաղը, մյուս օրը զայրալից հերքումներ լսեք, թե «մարդը երկու շաբաթ է, ինչ զոհվել է, մյուսի բառասունը դեռ չենք արել, մի քիչ սպասենք, հողը նստի, սկսենք...», չհավատաք, որովհետև խոսքն այն ազատամարտիկների մասին է, ում զոհվելը վկայող փաստաթղթերի չեղարկման փուլն ավարտվել է (իսկ այն մոտ կես տարի է տևում), և հողն էլ վաղուց նստել է:

Փոխնախարարը նշեց նաև այն ռազմական գործողությունների մասին, որոնք Տյոտյորի, Նոյեմբերյանի, Սխտորյանի, Ապարանի գործադիր կոմիտեները, որ անհրաժեշտ միջոցներ գտնվում են, սակայն այս տարի անհամեմատ կտրճ էր:

Մինչև դեկտեմբերի 10-ը «Եռաբլուր» հուշահամալիր-պանթեոնը լրիվ կբարեկարգվի, կկառուցապատվեն 240 գերեզմաններ, բայց ի՞նչ է լինելու շրջաններում...

Հանրապետությունում գործում են 260 գրանցված բարեգործական միություններ, յուրաքանչյուր շրջանում՝ 10-15 միություն, որոնցից յուրաքանչյուրի կանոնադրության մեջ առանձին կետ կա՝ զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին օգնելու մասին: Եթե նրանցից յուրաքանչյուրն օգնի երկու ընտանիքի, պարկերն էապես կփոխվի: Սակայն 260 բարեգործական կազմակերպություններից իսկապես գործ են անում «Սպեղանի», «Հայրիկ», «Գթություն», Լոս Անջելեսի «Հայրենիք» միությունները, Հայ Օգնության Խաչը, իսկ թե ի՞նչ են անում մյուսները, հայտնի չէ:

Պաշտպանության նախկին նախարար Վազգեն Մանուկյանն, այլ ելք չտեսնելով, հրամայել էր 100000-ական ռուբլիները վճարել անմիջապես, պաշտպանության հիմնադրամի միջոցներից, որոնք կարճ ժամանակ անց սկսել էին սպառվել...

Զինծառայողների սոցիալական պաշտպանվածության վարչությունը ստացել և զոհվածների ընտանիքներին է բաժանել 1000 հատ արտասահմանյան նավթավառ: Այժմ զոհվածների և վիրավորների ընտանիքներին է բաժանվում 10-ական կիլոգրամ արտասահմանյան բրինձ, իսկ պաշտպանության նախարարությունը նավթ և վառելափայտ հայթայթելու հուսահատ փորձեր է կատարում, անում այն ամենը, ինչ չեն անում համապատասխան մարմինները, և իրավաբաններին հանձնարարում ճշտել, թե համապատասխանո՞ւմ է արդյոք օրենքին «Շենգավիթի շրջխորհրդի գործկոմից ստացված պնդաբանությունը՝ «զոհվածի ընտանիքը հանվել է բնակարանի հերթից, որովհետև նրա զոհվելուց հետո այժմյան բնակակերեսը համապատասխանում է բնակվողների թվին»: Եթե օրենք է՝ տխուր օրենք է: Եթե պատճառաբանություն է՝ ավելի տխուր, թե նրա համար, ում շուրթերից հնչում է, թե նրա՝ ով լսում է:

ՏԻԳՐԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ